



05/9232-18  
1/17. 1/7856-18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ 694

«19» 06 2018 թ.

ք.Երևան

**ՌՈՒՍ - ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԾԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 430-Ա  
ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» համաձայնագրով հաստատված «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի կանոնադրության» 8-րդ հոդվածի և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության հայկական կողմի հետևյալ կազմը՝

1) Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության համանախագահ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Արկադի Բալյան.


2) Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության անդամներ՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Արտավազ Դավթյան:

բ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի արտակարգ իրավիճակների քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության վարչության պետ Մարիամ Գևորգյան:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի ապրիլի 21-ի «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության հայկական կողմի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 05-ի №1158-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» №430-Ա հրամանը:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

A handwritten signature in black ink is written over a grey, diamond-shaped official stamp. Below the stamp, the word "GSign" is printed in a small, sans-serif font.

Հ. ՌՈՍՏՈՅԱՆ